

«Զէ՞ որ ուսուցիչն ավ
ուսանելու պէտք ունի...»:

ՎԱՏԱՆ ԱԾԷՄԵԱՆ

Հրատարակչատան կողմէ

Ներկայ հատորը վերահրատարակութիւնն է Ս. Խաչ Դպրեվանքի վաստակաշատ ուսուցիչ Վահան Աճէմեանի համանուն հատորին, որու առաջին տպագրութիւնը եղած էր նոյեմբեր 2008-ին: Յուշագրական հատորը պատրաստուած էր հիմ ունենալով Աճէմեանի 172 մեծադիր էջերէ բաղկացած ձեռագիր եւ մեքենագիր գրութիւններն ու գրեթէ ամբողջութեամբ իր կողմէ տրամադրուած լուսանկարները:

Այս երկրորդ հրատարակութիւնը, որ կատարուեցաւ հեղինակի՝ 2 մայիս 2019-ին պատահած մահէն անմիջապէս ետք, ձօն մըն է վաստակաշատ կրթական մշակի անանց յիշատակին:

Վահան Աճէմեան ընդառաջելով մեր խնդրանքին թողթին յանձնած էր իր յուշերը, որոնք վստահաբար հետաքրքրական եւ կարեւոր են ո՛չ միայն իրենց պատմական բնոյթով, այլեւ ուսուցիչի մը կողմէ գրուած ըլլալու հանգամանքով:

Հրատարակուած էրան ու խմբագրուած էրան վերաբերեալ

**ՅՈՒՇԵՐ
ԱՌԱՆՑ ՓՈՒՇԵՐՈՒ**

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Z
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02
Fax: (0212) 252 6519
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No. 10728

ARAS - ԱՐԱՍ 102

**ՅՈՒՇԵՐ ԱՌԱՆՅ ՓՈՒՇԵՐՈՒ
ՎԱՀԱՆ ԱՃԷՄԵԱՆ**

Հրատարակչության պատրաստեց՝
Արտաշէս Մարկոսեան

Կողքը պատրաստեց՝
Մելիսա Արսէնեան

Կողքի լուսանկար՝
Վահան Աճէմեան Մարմարիսի մէջ,
Օչին Զիլինկիրի ոսպնեակէն (1969)

Տպագրութիւն
Սենա Օֆսեթ


Ա տպագրութիւն Նոյեմբեր 2008, Ստանպուլ
Բ տպագրութիւն Մայիս 2019, Ստանպուլ

ISBN 9786055753023

**ՅՈՒՇԵՐ
ԱՌԱՆՅ ՓՈՒՇԵՐՈՒ**

ՎԱՏԱՆ ԱՃԷՄԵԱՆ





12 Հոկտեմբեր 1997, Նիս

ՎԱՀԱՆ ԱՃԷՄԵԱՆ
1922, Ստամբուլ - 2019, Նիս

**ՅՈՒՇԵՐ
ԱՌԱՆՅ ՓՈՒՇԵՐՈՒ**

միջանկեալ եւ յաւելեալ նշումներով

ԱՐՄԱՏՆԵՐ



R. Liebig, PHOTOGRAPH ROUSTCHOUK

*Վահան Աճէմեանի մայրը՝ Աղանի Նազարեան եւ Հայրը՝
Լեւոն Աճէմեան նոր ընտանիք կազմած (Ռուսնուք, 1918):*

ԱՃԷՄԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Սեբաստիոյ ընդարձակ գերդաստաններէն մին եղած են Աճէմեանները, որոնց ամենանշանաւոր անձն է Մահտեսի Մկրտիչ Աճէմեանը: Ան ունեցած է երեք զաւակներ՝ տարիքի կարգով՝ Արմենակ, Գառնիկ եւ Հայզուարթ, որ յետագային մեր Զուարթ հօրաքը եղած է: Հայրիկիս համաձայն Մահտեսի Մկրտիչ Աճէմեանը միջոց մը եղած է Սեբաստիոյ կուսակալին սանտուղ էմիւնին՝ գանձապետը:

Մահտեսի Մկրտիչ Աճէմեանին եղբայրներէն մէկն ալ եղած է հօրենական մեծ հայրս՝ Յովհաննէսը: Ան ամուսնացած է Տաղաւարեան Օրիորդ Խուտցիկի հետ եւ ունեցած են չորս մանչ զաւակներ, որոնք բոլորն ալ մկրտուած են Սեբաստիոյ առաջնորդանիստ Սուրբ Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ: Առջինեկին տրուած է Նիկողոս անունը, իսկ եղբայրներուն՝ կարգաւ՝ Նշան, Քրիստոստուր եւ Գրիգոր:

Քրիստոստուրը՝ ապագայ հայրս՝ յետագային, կը քֆրեն խորհելով, «Լեւոն» անունը որդեգրած է:

Ապրելակերպի աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծելու համար հօրս ընտանիքը եազմայի գործատեղի մը հիմնելու նպատակաւ կը գաղթեն Եւզոկիա, որ կարեւոր արտադրութեան կեդրոն մը եղած է եազմայի (վրան գունաւոր նշաններ, գիծեր, ծաղիկներ, պատկերներ դրոշմուած շղարչ՝ տեսակ մը տպածոյ՝ որ կը գործածուի իբր ծածկոց, գլխաշոր, եւայլն):

1896ին Եւզոկիոյ մէջ չորս ժամ տեւող խառնակութիւն մը տեղի կ'ունենայ: Հայրս կը պատմէր թէ վարժապետը գիրենք տուն չէ դրկած, երբ տեղեկացած է անցուղարձերուն, եւ պատմութիւններով քնացուցած է աշակերտութիւնը: Թոհուբոհին դադրեցումէն ետք է որ կրցած են տուն վերադառնալ:

Եւզոկիոյ մէջ ահարկու ողողումի մը ընթացքին հրաշքով կը փրկուին եւ ձեռնունայն կը վերադառնան Սեբաստիա, ուր հայրս Մահտեսի Խաչատուր Աճէմեանի ապարանքին շինութեան ընթացքին միջոց մը իբր բանուոր կ'աշխատի: Այդ ապարանքը հանրապետութեան շրջանին իբր դպրոց գործածուած է:

Այս վերիվայրումներէն յետոյ հօրս դպրոցական կեանքը վերջ կը գտնէ: Ան իր կեանքի ընթացքին ունեցած է միայն մէկ դժգոհանք, զոր երբեմն ցասումով սապէս կ'արտայայտէր.

«Հայրս 40 փարայի համար զիս դպրոցէ զրկեց, մինչդեռ ես ուսումնաստենչ աշակերտ էի:

Լաւ կը յիշեմ, տարեվերջի քննութեան մը առթիւ ես պիտի կարգայի Յիլ [փիլ], իսկ ընկերս՝ Կիւլ [վարդ] անուն թրքերէն գրուածքը: Ես առանց սխալի, սահուն կարգացի.

—Յիլ. ֆիլ վիւնութնա տիւնեանըն էն պիւյիււֆ հայվանըտըր...: [Փիլ. փիլը՝ մարմնով՝ աշխարհի ամենախոշոր անասունն է:]

Կարգը ընկերոջս էր. երբ սկսաւ կմկմալ, քննիչներէն արտօնութիւն ուզեցի որ ես կարդամ: Յանկարծ դասընկերս միջամտեց.

—Տուր քի սէօյլէյէյիմ... [Կեցիւր որ ըսեմ:]

Բայց քննիչները ինծի հրամայեցին որ կարդամ:

—Կիւլ. կի՞ւլ միւսիւն, սիւմպի՞ւլ միւսիւն... [Վարդ. վա՞րդ ես, յակի՞նթ ես...:]

Ան ալ կարողացայ յաջողութեամբ կարդալ: Արժանացած էի նուէրի մը, որուն պարգեւատուութիւնն ալ յատկանշական էր: Սեղանի մը վրայ, բարակ եւ հաստափոր գիրքեր դիզուած էին. աշակերտը ազատ էր անոնցմէ փափաքածին տիրանալ: Բաւական դժուար եղաւ որոշումս, վարանումով բարակ գիրք մը առի ու հեռացայ:

Թէեւ դպրոցէն գրկուած էի, սակայն յուսահատ չէի, քանի որ Հայ Առաքելականները, Կաթողիկոսներն ու Բողոքականները ամէնքն ալ ունէին իրենց յատուկ ակումբներ ու լսարաններ, ուր բացի կրօնական քարոզչութենէ, շաբաթօրեայ՝ կիրակնօրեայ դասընթացքներ, նաեւ թատերական ներկայացումներ, հանդէսներ տեղի կ'ունենային: Իմ դպրոցներս եղան անոնք, որոնցմէ առաւելագոյնս օգտուեցայ: Կային նաեւ միսիոնարներու յատուկ կայաններ, որոնց բուն նպատակը քրիստոնեայ տարրը քրիստոնեայ դարձնել էր...»:

Քանի որ խօսքը միսիոնարներէ բացուեցաւ, ահա՛ ձեզի սեբաստացիներու կողմէ յարմարցուած գուարձախօսութիւն մը.

Ամերիկացի պատուելի միսիոնար մը իր ծառային հարց կու տայ.

—Մօ՛ Գիրգո՛ր, վրադ մանր մունր կենդանիներ մը պտտեն կոր, արդեօք ի՞նչ են.

—Ոջիլ էն, պատուելի, ոջիլ:

—Ոչի՞նչ, ի՞նչ ըսել է ոչիլ:

—Ողբիլը մարդուս ապականեալ արիւնները կը ծծէ՛, պատուելի:

—Քանի որ այդպէշ է, պէտք է որ մի քանի հատ ալ ինծի տաշ:

Այս առթիւ յիշեմ նաեւ սեբաստացիներու յատուկ մի քանի գուարճախօսութիւն եւս, գորս յաճախ լսած ենք մեր մեծերէն:

Ծերունի մը իշուն երկու մեծկակ տոպրակ աղ բեռցուցած՝ գետակէ մը անցնելու պահուն, բեռը կը քակուի, տոպրակներէն մին ջուրը իյնալու վտանգին մէջ է: Ծերուկը արգելք ըլլալու կ'աշխատի, բայց կը դժուարանայ: Այդ պահուն գիւղացի աղջիկ մը կը յայտնուի:

Մարդուկը ուրախութեամբ կը ձայնէ.

—Այ աղջի ջան, ի՞նչ կ'ըլլայ, եկուր սա տոպրակին մի քիչ թիկունք տուր օր լաւ մը կապեմ:

Աղջիկը անփութութեամբ կը պատասխանէ.

—էս հարս պիտի ըլլամ օր...:

*

Սեբաստիոյ քաղաքամէջէն մեծահարուստ իւրիսիկենք գիւղացի հարս մը կ'առնեն: Հարսը օր մը երբ բազնիքին խճողուած անցքէն դուրս գալու կը դժուարանայ, բարկաճայթ եւ սպառնազին կը պոռայ.

—է՛ս իւրիսիկենց հարսն եմ, ճամբայ տուէք օր անցնիմ, չէ նէ կոխկռտեմ կ'անցնիմ:

Իսկ ամենէն յատկանշական դրուագը հետեւեալն է.

Աճէմեան գերդաստանի մունջ հարսերէն մին իր կեսրայրին սպասարկելէ վերջ ոտքի վրայ կը սպասէ ու կը սպասէ, սակայն «գնա» հրամանը չի ստացուիր: Ոտքի վրայ

գամուած կը մնայ, քունը կը տանի եւ կը գլորի: Մահտեսի աղան այս անկուսի աղմուկէն կ'արթննայ.

— Հարս, դուն հո՞ս էիր... կ'ըսէ ու կը հրամայէ՝ «գնա՛»:

Նօրեղբայրներս

Հօրեղբօրներուս մասին տեղեկութիւններս գրեթէ ամբողջութեամբ կը վերաբերին անոնց չափահասութեան շրջանին, եթէ չհաշուենք իրենց կեանքին Սեբաստիոյ կամ Եւգոպիոյ շրջանէն աւանդուած մի քանի դրուագները:

Նուագագոյն տեղեկութիւնը Նիկողոս Հօրեղբօրս մասին է, քանի որ ան Մեծ եղեռնի զոհերէն մին եղած է. իր այրին՝ կարծեմ Սեւ ծովեան շրջանէն հարս եկած Լիս Ենկէս եւ իրենց միակ զաւակը Արամ հասած են Պոլիս, բնակութիւն հաստատած՝ Պէյօղլուի թաղերէն մէկուն մէջ:

Նշան Հօրեղբայրս մօտէն ճանչցած եմ, քանի որ Պոլսոյ մէջ միասին ապրած ենք: Ան առողջ, ջղուտ, նիհար, բարձրահասակ անձ մըն էր. կը պատմէր թէ իր երիտասարդութեան Սեբաստիոյ մէջ թիֆոյէ վարակուած է եւ տեղոյն հայապատկան կազմակերպուած հիւանդանոցին մէջ դարմանուած եւ ապաքինած է: Այդ օրէն սկսեալ կեանքին մէջ որեւէ դեղահատ չէ գործածած...:

Հետաքրքրական է Նշան Հօրեղբօրս կեանքը, քանի որ գինուորութեան եւ ապագայի մասին ունեցած մտահոգութիւններէն մղուած, օր մը պուլկարական նաւ մը բաներ մը ծախելու համար մտած եւ մեկնած է Վառնա, հոնկէ ալ անցած է Ռուսճուք, ճիշդ իրմէ առաջ Հօրս որդեգրած ճամբով, որ մանրամասն պատմուած է հետագայ էջերուն մէջ՝ երկու եղբայրներու կեանքին յաջորդ փուլերով...:

Գրիգոր Հօրեղբօրս գոյութեանը միայն երբ խելահաս էի տեղեկացած եմ. իսկ իր կեանքին մասին ունեցած եմ հատուկ կենտ տեղեկութիւն: Ան Ռումանիայէն մինչեւ Վլատիվոսթոք արկածախնդրութիւններով լի կեանք մը վարելէ վերջ, Պուքրէշի մէջ ամուսնացած է երկու զաւակ ունեցող

այրիի մը հետ եւ ամէնքով որդեգրած են Աճէմեան մականունը: Մինչեւ երկրորդ Համաշխարհային պատերազմի վերջաւորութիւնը վարած են բարեկեցիկ երջանիկ կեանք, բայց Համայնավարութեան օրով գրաւուած է Հօրեղբօրս կօշկակարի գործատեղին, ինք ստիպուած է հոն իբր պարզ գործաւոր աշխատիլ եւ խանգարուած է ընտանիքին բարեկեցիկ կեանքը:

Գրիգոր Հօրեղբօրս մահէն ետք, կինը Ովսաննան եւ աղջիկը Մալվինէն կրցած են ԱՄՆ գաղթել, իսկ զարմիկս Աբրահամը մնացած է Ռուսիա: Գալիֆօրնիայէն Ովսաննա ենկէիս մեզի ղրկած նամակներէն մէկուն մէջ սա նախադասութիւնը հետաքրքրական էր.

«Աղաւնի քոյրս, այստեղ ուտելիք կայ...»:

Մեծ մայրիկ-հօրաքոյր-մօրաքոյրներս

Հօրենական մեծ մայրս՝ Խոլտցիկն ալ Համայն Աճէմեաններու հետ տարագրուած եւ անհետ կորսուած է, ինչպէս նաեւ մօրենական մեծ մայրս՝ կէյվէցի Նոյեմզարը:

Չունէի Հօրաքոյր եւ մօրաքոյր: Այս պատճառաւ տագրութենէն վերադարձած սեբաստացի եւ կէյվէցի կիները մեր մօրաքոյրները եղած էին...:

Կէյվէցիներն էին Սիրանոյշ եւ Անժէլ մօրաքոյրները: Սիրանոյշ մօրաքոյրը Հաստատուած էր Ֆրանսա՝ Էքսան Փրովանս [Aix-en-Provence]. ան Պոլսոյ մէջ իմ մանկութիւնս տեսած է եղեր: Իսկ Անժէլ մօրաքոյրս Պոլիս կը բնակէր. կէյվէցի Արմենակ Միսքճեանի հետ ամուսնացած ըլլալով երեք զաւկի տէր եղած էին՝ Օննիկ, Ժիրայր եւ Սօնա:

Ես երբ նախակրթարանի աշակերտ էի, ինծի վիճակած էր Անժէլ մօրաքիս երրորդ զաւկին կնքահայրութիւնը. մագերս կնտուած եւ արեւէն թխացած ղէմքս տեսնելով, քահանան ներկաներուն լրջութեամբ Հարցուցած էր.

—Այս տղան հա՞յ է:

Հայութիւնս ստուգելէ վերջ, հանգիստ սրտով կրցած էր կնոնքի արարողութեան սկսիլ: Տէր Հայրը երբ հարցուցած էր թէ երախան ի՞նչ կը խնդրէ, պատասխանած էի.

— Հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն...

Այս պատասխանին վրայ տարօրինակ նայուածքով մը կարծես թէ զիս կշտամբած էր. սակայն հոգս չէր, քանի որ առօք փառօք կատարած էի պարտականութիւնս եւ պաշտօնապէս մանկիկը մկրտուած էր «Սօնա-Սէլմա» զոյգ անունով:

Միւս մօրաքոյրներս էին Արապեան եղբայրներուն՝ Ստեփան եւ Արամայիսին մայրը Չաքըր Աղաւնին եւ Պէշիկթաշ բնակող Շուշան մօրաքոյրս, որուն զաւակները՝ Պարգեւ եւ Ասատուր՝ Վաքըֆ խանի մէջ զինկօկրաֆ էին:

Սեբաստացիներէն էր Մահտեսի Մկրտիչ Աճէմեանին աղջիկը՝ Զուարթ Հօրքուրս:

Եւ վերջապէս յիշեմ Երանիկ Հօրքուրս, որ մայրիկիս սապէս արտայայտուած է իրենց քահանային ճակատագրին մասին.

— Ախ, Աղաւնի քուրբս, մեր գեղին տէրտէրը նախեցին: [պայտեցին, ոտքին պայտ գամեցին]

Զուարթ հօրքուրս

Զուարթ Հօրքուրս իր սերնդակիցներուն նման ունէր սրտաճմլիկ պատմութիւն մը, զոր օր մը իր ցասումնալից պողթկոմով անջնջելիօրէն դրոշմած է ուղեղիս մէջ:

Ան դեռ ԱՄՆ չմեկնած, 1970ականներուն, հեռատեսիլէն սփռուած մէկ յայտագրէն ազդուած, բացազանչած էր.

«Մինչեւ այսօր չխօսեցայ, սակայն այլեւս չեմ դիմանար այս անհեթեթութեան, ահա՛ թէ ինչ փորձանք բերած են մեր գլխուն.

Հագլւ թէ 8 տարեկան էի... եկան եւ ըսին.